



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

նոյեմբերի 2018 թվականի №
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԵԲԵԴԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ
ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ՈՒՂԵԿԱԼԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱՆՑԻՆ
ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 26-ի №04-ԿՀ-02/3727 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

- 1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դեբեդավան գյուղում գտնվող ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի սահմանապահ ուղեկալի նոր կառուցվող կամ վերակառուցվող սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է եռակողմ կնքված էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ Միացման պայմանագիր)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և «Արտադրական բազա» բաց բաժնետիրական ընկերության միջև փոխհամաձայնեցված կարգով.

- 2) Էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» N°659Ն որոշման.
- 3) Միացման պայմանագիրը կնքվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից՝ դիմումն առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացված լինելու դեպքում՝ դիմումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
 2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրով նախատեսված կանխավճարի վճարման օրվանից փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը՝ էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում չի կարող գերազանցել 90 օրը:
 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը և «Արտադրական բազա» բաց բաժնետիրական ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՍՈՆՅԱՆ